ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք,

Հեռ. (+374)10570830, (+374)10554057 Էլ.հասցե hasarakakan.kartsiq@gmail.com

Հայկական մեդիայի դերը սփյուռքում՝ որպես տեղեկատվության փոխանցման և հայրենիքի հետ կապերի ամրապնդման գործիք սոցիալ-քաղաքական փոփոխությունների պայմաններում

Երևան 2018

Վերլուծություն

«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը» իրականացրել է սոցիոլոգիական հետազոտություն՝ պարզելու սփյուռքահայ հեռուստադիտողների հեռուստատեսային և ռադիո նախընտրությունները, արբանյակային հեռուստատեսության և ռադիոյի դերը հայկական սփյուռքում սոցիալ-քաղաքական փոփոխությունների համատեքստում:

Հետազոտությունն անց է կացվել դեմ առ դեմ հարցումների և էլեկտրոնային հարցումների մեթոդների կիրառությամբ: Դեմ առ դեմ հարցումները անցկացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպած ծրագրերի շրջանակներում Հայաստան ժամանած սփյուռքահայերի հետ: Էլեկտրոնային հարցաթերթերը ուղարկվել են սոցիալական ցանցերի միջոցով, ինչպես նամակների ձևով, այնպես էլ տեղադրվել են հատուկ սփյուռքահայերի համար գործող խմբերում և էջերում: Ընտրանքի ծավալը կազմել է 1500 հարցվող: Հաշվի առնելով հայկական սփյուռքի բազմաշերտությունը՝ հետազոտության արդյունքները տարածելի չեն ողջ սփյուռքի վրա, այլ կիրառելի են սփյուռքի որոշ համայնքների վրա՝ մասնավորապես հարցվողների շրջանի:

Հետազոտության սկզբում փորձել ենք պարզել, թե հարցվածները Հայաստանի մասին տեղեկատվություն ինչ աղբյուրներից են հիմնականում ստանում: Հարցվածները հնարավորություն են ունեցել նշելու մի քանի տարբերակներ, ուստի Գծապատկեր 1-ում նշված տարբերակների տոկոսային հանրագումարը հարյուր չէ:

Ինչպես տեսնում են գծապատկերում հայկական արբանյակային հեռուստատեսությունը՝ որպես տեղեկատվության աղբյուր, հանդիպում է դեպքերի 48%-ի մոտ: Նույն տոկոսային ցուցանիշն ունեն նաև Հայաստանում ապրող բարեկամները, ծանոթներն ու ընկերները: Որպես տեղեկատվության աղբյուրներ հաճախ են նշվել նաև հայկական ինտերնետային կայքերը, ֆեյսբուքը, ինչպես նաև իրենց բնակության երկրում ապրող հայերը: Հայկական ռադիոն՝ որպես տեղեկատվության աղբյուր, հանդիպում է 5% դեպքերում: Տվյալներն առավել մանրամասն ներկայացված են Գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. Հայաստանի մասին տեղեկատվություն ստանալու աղբյուրները

Անդրադառնալով հայկական արբանյակային հեռուստատեսությանը՝ նշենք, որ ինչպես նախորդ տարին, այս տարի ևս ամենաշատ դիտվող հեռուստաալիքները Արմենիան և Շանթն են՝ համապատասխանաբար 72% և 71%: Արդյունքները՝ Գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2. Հայկական որ հեռուստաալիքներն են դիտում (%)

Հարցվածների 88%-ը նշել է, որ հետևել է Հայաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին:



Գծապատկեր 3. Արդյոք հետևում էին Հայաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին

Չնայած նրան, որ, ինչպես նշում են հարցվածները, իրադարձություններին հետևել են Ազատության օնլայն հարթակով, այնուամենայնիվ հարցվողների համար առավել վստահելի աղբյուրներ են նախ հայկական արբանյակային հեռուստատեսությունը, ապա Հայաստանում ապրող բարեկամները, ծանոթները կամ ընկերները: Տվյալները ներկայացված են Գծապատկեր 4-ում:



Գծապատկեր 4. Հայաստանի մասին տեղեկատվություն ստանալու ամենավստահելի աղբյուրը (%)

Հարցին, թե ինչ վերաբերմունք ունեն տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ սփյուռքահայերը հաճախ են նշել, որ Հայաստանի և սփյուռքի հարաբերություններում որակական փոփոխություն անելու համար ստեղծվել են բոլոր հնարավորությունները:

«Եկել է ժամանակը, երբ պետք է վերանայել Հայաստան-սփյուռք հարաբերությունները, դրանք դնել իրական հիմքի վրա, որպեսզի ծառայեն երկրի զարգացմանը»:
Եվրոպայի հայերի համագումարի նախագահ Կարո Հակոբյան (մեջբերումը Սպուտնիկ Հայաստանին տված հարցազրույցից)

Սփյուռքահայերը իրենց մտահոգությունները, միևնույն ժամանակ ոգևորությունն են արտահայտել տեղի ունեցածի վերաբերյալ՝ հաճախ ափսոսանք արտահայտելով, որ միայն հեռվից են կարողացել հետևել իրադարձություններին:
Հարցվածների կարծիքով պետք է ստեղծել մեկ միասնական ուժ, որը կկարգավորի և կլրացնի առկա բացերը ու կզբաղվի հայկական սփյուռքի կարիքներով:

«Հիմա սփյուռքը նման է մի կորպորացիայի, որը ներկայացուցչություններ ունի տարբեր երկրներում (5-7 միլիոն մարդ ընդհանուր թվով), բայց չկա այն միջուկը, որը կկարգավորի տարբեր կառույցների աշխատանքը:
Պետք է միջոց գտնել, որպեսզի այդ հսկայական «ձեռնարկությունը» կարողանա աշխատել»:
Եվրոպայի հայերի համագումարի նախագահ Կարո Հակոբյան (մեջբերումը Սպուտնիկ Հայաստանին տված հարցազրույցից)

Հարցված սփյուռքահայերը իրենց պատրաստակամությունն են հայտնել մասնակցել խնդիրների լուծմանը՝ ձևավորելով աշխատանքային խմբեր, որը առավել արդյունավետ կլինի, ըստ իրենց, քանի որ հենց իրենք են խնդիրների կրողները և առավել մանրամասն են տիրապետում համայնքում առկա կարիքներին:
Ըստ Եվրոպայի հայերի համագումարի նախագահի՝ պետք է որոշակի բազա ստեղծել մարդկանցից, որոնք պատրաստակամություն կհայտնեն օգնել երկրին: Նրանք պետք

է ընտրեն ներկայացուցչական մարմին, որը սփյուռքի անունից խոսելու իրավունք կունենա:

Նրա խոսքով՝ այսօրվա պայմաններում սփյուռքի ճնշող մեծամասնությունը վստահում են Հայաստանի նոր իշխանություններին և պատրաստ են համագործակցել նրանց հետ[1]:

Նշենք նաև, որ միասնական բազայի ստեղծման գաղափարը առաջ է քաշվել նաև կենտրոնի կողմից տարբեր տարիներին իրականացված սփյուռքին առնչվող հետազոտությունների արդյունքում:

Հետազոտության շրջանակներում հարցվածների հետ քննարկվել է նաև Հայաստան վերադառնալու հարցը՝ պայմանավորված տեղի ունեցած իրադարձություններով և իշխանական փոփոխություններով: Հարցվածների մեծամասնությունը նշել է, որ դեռևս Հայաստան վերադառնալու պլաններ չկան, հետագայում միգուցե լինեն (62%): Հայաստան վերադառնալու հստակ պլաններ ունեն հարցվածների 15%-ը:



Գծապատկեր 5. Հայաստան տեղափոխվելու մտադրություններ

Հարցվածների 15%-ը նշել է, որ երբեք չի վերադառնա Հայաստան մշտական բնակություն հաստատելու, իսկ 8%-ը պատասխանել է, որ անկախ ամեն ինչից, անկախ հեղափոխությունից վերադառնալու էր Հայաստան մշտական բնակություն հաստատելու:

[1] https://armeniasputnik.am/armenia/20181001/14802218/armenia-hexapoxutyun-karo-hakobyan.html

Հետազոտության շրջանակներում դուրս են բերվել նաև «հայի» հետ նույնականացման տարրերի վերաբերյալ տվյալները: Քանակական հարցաթերթում դիտարկվել են հետևյալ կատեգորիաները՝ 1. իրեն հայ համարելը 2. Հայաստանը իր միակ հայրենիքը համարելը 3. հոր հայ լինելը 4. մոր հայ լինելը 5. հայ եկեղեցուն դավանելը 6. հայերեն խոսելը 7. հայկական ազգանուն ունենալը 8. հայկական անուն ունենալը 9. Հայաստանի Հանրապետության ուժեղացմանը միտված քայլեր իրականացնելը:

«Հայի» հետ նույնականացման հիմնական տարրը, ըստ հարցվածների, «իրեն հայ համարելն է»: Հարցման մասնակիցները նշում են, որ հայ կարող է համարվել այն մարդը, ով իրեն հայ է զգում, հայ է համարում: Հարցման տվյալները ցույց են տալիս, որ հայ համարվելու կարևոր նախապայմանը անհատի ինքնանույնականացումն է (70%):

Կարծիքները նույնական են, և ինչպես 2015թ.-ի հարցման մասնակիցների, այնպես էլ 2014թ.-ին իրականացված հարցման մասնակիցների դեպքում հայ համարվելու կարևոր նախապայման է անհատի սեփական ընկալումը: